ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

19.04.2018թ. N 02/16.4/1942-18

<<Տավրոս>> սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության
տնօրեն պարոն Ալբերտ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Ձեր 2018 թվականի ապրիլի 13-ի
N 4-18 գրություն

Հարգելի պարոն Ղազարյան

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի և <<Տավրոս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2016 թվականի հուլիսի 29-ին կնքված ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ-16/9Հ գնման պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված ծառայությունները կատարելուց հրաժարվելու մասին, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3 կետով սահմանված պայմանը՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմը 2018 թվականի ապրիլի 20-ից միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ մնացորդային 1570550 ՀՀ դրամ գումարի չափով:

Համաձայն Պայմանագրի 5.2 կետի պահանջի՝ անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 11580 (տասնմեկ հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ որպես տուգանք:

Տեղեկացնում եմ նաև, որ համաձայն ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը տեղադրվել է gnumner.am կայքում:

Հարգանքով՝

Արամ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ ԿԱ ՔՊԿ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական
և հաշվապահական հաշվառման վարչություն. Աշոտ Բաբայան
Հեռ: 011621727